«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«07» 07 2014թ.

Հաստատում եմ

Գնումների աջակցման կենտրոնի

պետի ժամանակավոր պաշտոնակատար

Հ. Թունյան

N ԳԲԽ 22/14 բողոքը քննող

հանձնաժողովին

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ու Թ Յ Ու Ն

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «ԱԳԱԹ-777» ՍՊԸ-ի կողմից 20.06.2014թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

1. «ԱԳԱԹ-777» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին 20.06.2014թ. ներկայացված բողոքով «ԱԳԱԹ-777» ՍՊԸ-ն հայտնել է, որ ՀՀ ԿԱ ոստիկանության զորքերն

էլեկտրոնային գնումների «armeps.am» համակարգում 2014թ. մայիսի 26-ին հրապարակել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/13» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու «ՀՀ ԿԱ Ո-ՇՀԱՊՁԲ-11/13» ծածկագրով գրասենյակային կահույքի ձեռքբերման համար ընթացակարգի հրավեր: Սակայն հրավերում խախտվել է ՀՀ կառավարության 2011թ. փետրվարի 10-ի 168-Ն որոշմամբ հաստատված կարգի 110-րդ կետի 7-րդ մասի պահանջները:

Ելնելով վերոգրյալից՝ «ԱԳԱԹ-777» ՍՊԸ-ն խնդրել է ՀՀ ԿԱ ոստիկանության զորքերի կողմից «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/13» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում «ՀՀ ԿԱ Ո-ՇՀԱՊՁԲ-11/13» ծածկագրով գրասենյակային կահույքի ձեռքբերման նպատակով կազմակերպված ընթացակարգը չեղյալ հայտարարել:

2. ՀՀ ԿԱ ոստիկանության զորքերի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները.

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը 25.06.2014թ. N 05/032-1136 գրությամբ դիմել է ՀՀ ԿԱ ոստիկանության զորքերին՝ խնդրելով կարծիք տալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 20.06.2014թ. «ԱԳԱԹ-777» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ:

ՀՀ ԿԱ ոստիկանության զորքերը 27.06.2014թ. N 4/493 գրությամբ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացրել է «ՀՀ ԿԱ Ո-ՇՀԱՊՁԲ-11/13» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգին վերաբերող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները:

Միաժամանակ, ՀՀ ոստիկանության զորքերը հայտնել է, որ «ԱԳԱԹ-777» ՍՊԸ-ի կողմից 20.06.2014թ. ներկայացված բողոքի հետ համաձայն է, քանի որ վերը նշված ընթացակարգով հայտարարված հրավերում իրենց կողմից խախտվել են ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 110-րդ կետի 7-րդ ենթակետի պահանջները:

3. ԳԲԽ-22/14 բողոքի վերաբերյալ էական նշանակություն ունեցող փաստերը, ԳԲԽ-22/14 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումները.

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ նաև Կենտրոն), ուսումնասիրելով «ԱԳԱԹ-777» ՍՊԸ-ի (այսուհետ՝ նաև Ընկերություն) 20.06.2014թ. ներկայացրած բողոքը, «ՀՀ ԿԱ Ո-ՇՀԱՊՁԲ-11/13» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), ՀՀ ԿԱ ոստիկանության զորքերի (այսուհետ՝ նաև Պատվիրատու) կողմից 27.06.2014թ. ներկայացված N 4/493 գրությունը և դրան կից փաստաթղթերը, հայտնում է հետևյալը.

ՀՀ ԿԱ ոստիկանության զորքերի կողմից գրասենյակային կահույքի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ԿԱ Ո-ՇՀԱՊՁԲ-11/13» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգ (այսուհետ՝ նաև Ընթացակարգ):

Վերոհիշյալ ընթացակարգի հրավերով հայտերի բացման օր է սահմանվել 2014թ. հունիսի 10-ը, ժամը 12:00-ն:

Ընթացակարգի հրավերի անբաժանելի մասը կազմող պայմանագրի նախագծի N 2 հավելվածով՝ գնման ժամանակացույցով, ապրանքների 1-ին խմբաքանակի մատակարարման ժամկետ է սահմանվել 2014թ. 2-րդ եռամսյակը, այսինքն՝ մինչև 2014թ. հունիսի 30-ը:

«ԱԳԱԹ-777» ՍՊԸ-ն 20.06.2014թ. ներկայացված բողոքով հայտնել է, որ Պատվիրատուի կողմից խախտվել են ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ նաև Կարգ) 110-րդ կետի 7-րդ ենթակետի պահանջները՝ խնդրելով չկայացած հայտարարել ՀՀ ԿԱ ոստիկանության զորքերի կողմից կազմակերպված «ՀՀ ԿԱ Ո-ՇՀԱՊՁԲ-11/13» ծածկագրով ընթացակարգը:

ՀՀ ԿԱ ոստիկանության զորքերը 27.06.2014թ. Կենտրոնին ներկայացրած N 4/493 գրությամբ հայտնել է, որ չի առարկում «ԱԳԱԹ-777» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի դեմ և ընդունում է, որ Պատվիրատուի կողմից հրավերով մատակարարման ենթակա ապրանքների 1-ին խմբաքանակի համար սահմանված ժամկետը չի համապատասխանել Կարգի 110-րդ կետի 7-րդ ենթակետի պահանջներին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 2014թ. հուլիսի 3-ին, ժամը 12:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 2.1 կետով որոշում է կայացվել Ընթացակարգի հրավերը Կարգի 110-րդ կետի 7-րդ ենթակետի պահանջներին

չհամապատասխանելու հիմքով չկայացած հայտարարել «ՀՀ ԿԱ Ո-ՇՀԱՊՁԲ-11/13» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգը, որի մասին հայտարարությունը տեղադրվել է «gnumner.am» համացանցային կայքում:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով այն հանգամանքը, որ «ԱԳԱԹ-777» ՍՊԸ-ի կողմից 20.06.2014թ. բողոքով Կենտրոնին ներկայացված ՀՀ ԿԱ ոստիկանության զորքերի կողմից գրասենյակային կահույքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ԿԱ Ո-ՇՀԱՊՁԲ-11/13» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգը չեղյալ հայտարարելու մասին պահանջը բողոքի քննության ընթացքում դարձել է առարկայազուրկ, քանի որ մինչև Գնումների բողոքարկման խորհրդի կողմից համապատասխան որոշում ընդունելը Պատվիրատուն կայացրել է որոշում գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին, ուստի առաջարկում ենք բողոքը մերժել:

Պետի տեղակալ՝ Է. Սարգսյան

Գնումների աջակցման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի առաջատար մասնագետ՝ ԳԲԽ-22/14 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար Լ. Մկրտչյան